

ԺԷ. դարու ուղեգիր մը ևս կը գրէ. « . . . հոն ցոյց կը տրուի նարնջենի մը՝ որ կ'ըսուի թէ անկուած է այն տեղը ուր Պետրոս վառուած կրակէն կը տաքնար սպասաւորներու հետ և որոնց առջև ան ամէցաւ իր բարի վարդապետին աշակերտը ըլլալու: Աքաղաղին պատկերը քանդակուած է հարթ քարի մը վրայ և ագուցուած եկեղեցիին դիմացի պատին մէջ (Հ. Վ. Ե. էջ 83):

ը) Ս. Պետրոս առաքեալին գոջումի այրը. — Այս տեղը կը գտնուի Սիոն լեռան հարաւ-արեւելեան կողմը՝ ստորոտին վրայ, ճանապարհին ձախին, և տասը մէգր դէպի ներս: Պետրոս առաքեալ Տէրը ուրանալէ յետոյ հաւուէն խօսիլը իմանալով յիշեց Յիսուսի կանխասացութիւնը և իր յանցանքը ճանչնալով, ըստ աւանդութեան՝ եկած է զղջալու համար այրի մը մէջ բնակելով: Այս այրին բերանը բաւական ընդարձակ է ու դէպի արևելք կը նայի:

Այս այրին վրայ հին ժամանակներուն շինուած է եկեղեցի մը, բայց քանդուած ըլլալով՝ Սաչակիրները յետոյ նորոգեցին զայն, սակայն դարձեալ քանդուած է, և երկար ժամանակ մնացած է աւերակներու մէջ: 1887 ի պեղումներէն հոն գտնուած են գեղակերտ մոզայիքներ և տապանաքարեր և եկեղեցիին մնացորդները. վերջերս լատին միաբանութիւն մը հոն եկեղեցի մը շինած է:

Թէոտորիք (1172) կը վկայէ թէ Ս. Պետրոսի եկեղեցին ԺԲ. դարուն Հայոց ձեռքը կը գտնուէր, եւ աւելի հին ժամանակներուն ալ հոն կար «Ս. Պետրոսի հառաչանաց» վանքը որ դարձեալ Հայոց կը պատկանէր: